ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՍ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՍ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ, ԱՆԴԱՄՍ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻ, ՈՐ Ի ՓԷՆՍԻԼՎԱՆԻԱ, ԱՄՆ

Գոհութիւն եւ փառք ենք մատուցում առ Բարին Աստուած, որ Առաքելական մեր Մայր Եկեղեցին հոգեւոր իր սպասաւորներով աշխարհի չորս ծագերում նուիրական ներկայութիւն է հաւատաւոր ու բարեպաշտ Մեր զաւակաց կեանքում որպէս գանձատուն մեր հայրերի սրբազան ժառանգութեան եւ հայապահպանութեան կենսատու օրրան:

Անհուն ուրախութեամբ տեղեկացանք Ամերիկայի Արեւելեան թեմի բարեջան առաջնորդ, Գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանից, որ պատգամաւորական ժողովի սիրեցեալ անդամներդ, որպէս «մանկունս, որ բոլորեալ են զմարբն իւրեանց», համախմբուելու էք Սուրբ Երրորդութիւն եկեղեցւոյ աղօթաբոյր կամարների ներքոյ՝ միասնաբար խորհելու եւ ծրագրեր մշակելու՝ թեմական-համայնքային Ձեր կեանքը Միացեալ Նահանգների Արեւելեան թեմում առաւել արդիւնաւէտ ու բեղմնաւոր դարձնելու համար:

Հազարամեակների սահմանագծին, որպէս նորընտիր Հայրապետ Հայոց, ուրախ ենք, որ ամերիկահայոց Արեւելեան թեմի պատգամաւորաց ժողովին ուղղուած Հայրապետական Մեր անդրանիկ օրհնագիրը Ամերիկայի հեռաւոր հողում Ձեզ գտնելու է առ Եկեղեցին Հայաստանեայց եւ առ ազգն հայոց բոլորանուէր ծառայութեան մէջ:

Հայրենիքից օվկիանով զատուած հեռաւոր այդ երկրում, ուր մարդկային միտքը անսահման երեւակայութեամբ նիւթական բիւր բարիքներ է ստեղծել եւ մշակոյթներ ձուլող արդի հզօր քաղաքակրթութիւն, արդարեւ, անսահման սէր է անհրաժեշտ հայրենական աւանդութիւնների ու սրբութիւնների նուիրական վէմի վրայ ամուր կենալու համար:

Սիրեցեալ անդամք պատգամաւորական ժողովոյ.

Ծանօթ ենք թեմական եւ համայնքային կեանքի Ձեր դժուարութիւններին, բայց եւ բերկրանօք է լցուած Մեր հոգին այն իրողութեամբ, որ Ամերիկայում հաստատուած

երբեմնի փարագիր հայութիւնը՝ համախումբ առաքելահաստատ ու առաքելաշաւիղ մեր Եկեղեցու շուրջ, տասնամեակների ընթացքին հայրենաշունչ իր կեանքն է կերտել եւ օրաւուր զօրացնում է այն երիտասարդաց ու տիկնանց միութիւնների, հայեցի դաստիարակութիւն ու կրթութիւն ջամբող դպրոցների, հոգեւորականաց նոր սերնդի պատրաստութեան մեծարժան գործերով, ազգանպաստ ձեռնարկումներով:

Երիցս փառք ենք մատուցում Բարձրեալն Աստծուն, որ ամենամեայ պատգամաւորական Ձեր ժողովները՝ շնորհիւ նախանձախնդիր Ձեր ոգու եւ հեգեւողական աշխատանքի, արգասաւորուել են բարեաց պտուղներով՝ օրհնութեան աղբիւր դառնալով ինչպէս Ամերիկայի հայոց ազգային-եկեղեցական, այնպէս էլ հայրենաբնակ մեր ժողովրդի կեանքում:

Արդարեւ, առ Աստուած փառաւորութեան հոգենորոգ առիթ է Մեզ համար, քանզի Դուք Հայրենիքի նկատմամբ Ձեր սէրը հաւաստել էք ձեռաց գեղեցիկ արարումներով՝ Հայաստանի ու Արցախի հայրենական մեր հողի վրայ մշակութային-կրթական, ընկերային-բարեսիրական, եկեղեցաշինական ընդարձակ գործունէութիւն իրականացնելով, որոնց շարքը համալրուելու է հայաստանեան թեմերի զօրացմանը նպատակաուղղուած «Քոյր Եկեղեցիներ» ծրագրի Ձեր ազնիւ մտահղացմամբ:

«Բազում են վարձք ձեր» անվերապահ վստահութեամբ եւ բարձր գնահատանքով համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Օրհնութիւն Հայրապետական եւ փոխանցում Ձեզ հարազատի Ձեր ջերմութիւնից նոր ոգի ու մխիթարութիւն ստացած հայրենաբնակ մեր բարեպաշտ ժողովրդի՝ Ձեր եղբայրների ու քոյրերի սէրն ու բարեմաղթանքները:

Մեր Մայր Եկեղեցւոյ նուիրեալ գաւակացդ ջանադիր ու անձնուէր սպասաւորութեան արգասաբերութեան համար ջերմեռանդ աղօթքով առ Ամենախնամն Աստուած՝ մաղթում ենք Ձեզ երկար ու քաջառողջ կեանք, մշտաբուխ ոյժ ու կորով: Թող Տէրն օրհնի Ձեզ ու շնորհը պարգեւի համատեղ տքնանքով ու ինքնընծայումով հայրենաշէն ու եկեղեցանուէր Ձեր ծառայութեան քաղցր պտուղները ճաշակելու:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանսդ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 27-ն մարտի
յամի Տեառն 2000
եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 20